ՀԱՅԱՍՏԱՆ-ՉԻՆԱՍՏԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

DOI: 10.52174/2579-2989_2025.3-59

Հիմնաբառեր. *Հայաստան, Չինաստան, առևտուր, վերաարտահանում, ԱՓԻ*

Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

Փորձագետ-գիտաշխատող

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առայսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

https://orcid.org/0000-0001-7669-8626

Չինաստանն աշխարհի խոշորագույն և, միաժամանակ, ամենաարագ զարգացող տնտեսություններից մեկն է: Վերջին տարիներին զգալիորեն ակտիվացել են Հայաստան–Չինաստան առևտրային հարաբերությունները՝ հասնելով պատմականորեն անանախադեպ ծավալների: Հոդվածում վերլուծվել են այս աճի հիմնական խթանները, ինչպես նաև փորձ է արվել գնահատելու փոխադարձ առևտրի հետագա զարգացման հնարավորությունները: Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանից Չինաստան արտահանման կառուցվածքը խիստ կենտրոնացած է երկու ապրանքախմբի՝ թանկարժեք մետաղների (վերաարտահանում) և հանքաքարերի վրա: Արտահանման ընդհանուր աճը պայմանավորված է հենց այս ապրանքախմբերի արտահանման ծավալների կտրուկ ավելացմամբ: Միաժամանակ, կարևորվում է արտահանման բազմազանեցումը: Այդ նպատակով առանձնացվել են այն ապրանքախմբերը, որոնք արտահանման ներուժ ունեն չինական շուկայում՝ մասնավորապես ծխախոտ, ըմպելիքներ, կակաոյից պատրաստված մթերք, ինչպես նաև բժշկական և վիրաբուժական սարքեր ու դրանց մասեր:

Չինաստանը համարվում է համաշխարհային տնտեսության զարգացման շարժիչ ուժը: Լինելով աշխարհի խոշորագույն տնտեսություններից մեկը՝ երկիրը դեպի իրեն է ձգում գլոբալ ներդրումներ ու ռեսուրսներ: Եթե նախորդ երեք տասնամյակներում երկրի տնտեսությունը հիմնված էր էժան ապրանքների արտահանման վրա, ապա վերջին ժամանակներում ակտիվո-

րեն վերափոխվում է նորարարական և տեխնոլոգիական կարևորագույն հանգույցի[1]: Գլոբալ ազդեցությանը զուգահեռ, Չինաստանը Հայաստանի արտաքին առևտրի հիմնական գործընկերներից է, ինչն ընդգծում է երկկողմ տնտեսական հարաբերությունների վերլուծության կարևորությունը:

Չինաստանի հետ Հայաստանի կապերն ունեն երկար պատմություն: Երկկողմ դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են դեռևս 1992 թվականին: Նույն թվականին էլ կնքվել է առևտրատնտեսական համաձայնագիր[2], որն ըստ էության նախանշել է փոխադարձ առևտրի հիմնական սկզբունքները: Երկկողմ տնտեսական կապերի իրավական կարգավորումը նոր փուլ է մտել ԵԱՏՄ կազմավորմամբ: Մասնավորապես՝ 2019 թ. ուժի մեջ է մտել ԵԱՏՄ-ի և Չինաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը[3]: Թեև դա ազատ առևտրի մասին համաձայնագիր չէ և, ըստ այդմ, չի նախատեսում մաքսատուրքերի նվազեցում կամ վերացում, սակայն ներառում է մի շարք ոլորտային կարևոր կարգավորումներ՝ մաքսային համագործակցություն, առևտրի տեխնիկական խոչընդոտների վերացում, էլեկտրոնային առևտուր, մտավոր սեփականության պաշտպանություն, պետական գնումներ և ճյուղային համագործակցություն: Այս միջոցառումները նշանակալիորեն նվազեցնում են առևտրի ոչ մաքսային խոչընդոտները: Առևտրային փոխգործակցության տեսանկյունից, կարևոր է նաև ընդգծել, որ վերջին տարիներին Չինաստան-Հայաստան երկկողմ հարաբերություններում ակտիվ քննարկումներ են ընթանում Չինաստանի ամենահավակնոտ նախաձեռնություններից մեկում՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրում Հայաստանի ներգրավման շուրջ, սակայն այս քննարկումները դեռևս չեն վերածվել կոնկրետ գործնական քայլերի[4]:

2022 թ. սկսած, ռուս ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված, շեշտակի փոփոխությունների է ենթարկվել ՀՀ առևտուրը: Նախ՝ Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ առևտրային պատժամիջոցների կիրառումը փոխեց հայկական ապրանքների մրցակցային հնարավորությունները: Բացի դրանից, աննախադեպ ծավալներով աճեց ՀՀ վերաարտահանումը, որի զգալի մասը ՀՀ պաշտոնական վիճակագրության մեջ գրանցվել է որպես արտահանում[5]: Դրա հետ կապված փոփոխությունների է ենթարկվել ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքը: Դիտարկենք, թե ինչպես են անդրադարձել այս գործընթացները Հայաստան-Չինաստան առևտրի վրա, և որոնք են չօգտագործված հնարավորությունները:

Չինաստանը Հայաստանի հիմնական առևտրատնտեսական գործընկերներից է: 2024 թ. երկիրը եղել է արտահանման գծով ՀՀ 4-րդ խոշորագույն գործընկերը, որին բաժին է ընկել ՀՀ արտահանման 8.4%-ը, իսկ ներմուծման գծով 2-րդ գործընկերը՝ 9.9% մասնաբաժնով[6]: Նշենք, որ 2014-2021 թթ. ընթացքում Չինաստանի մասնաբաժինը Հայաստանի ներմուծման մեջ կայուն աճ է արձանագրել՝ 2021 թվականին հասնելով առավելագույն մակարդակի՝ 16.2%-ի, որից հետո դիտվել է աստիճանական նվազում: Արտահանման կառուցվածքում ևս Չինաստանի մասնաբաժինն ամենաբարձրն է եղել 2021 թ.՝

[1] Baena C., China as the World's Innovation Leader, https://www.ism.edu/ism-insights/how-ism-continues-to-make-an-impact-3.html

[2] Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիր (1992 թ., հունվարի 9), http://www.parliament.am/library/erkoxm/1991-1995/4.pdf

[3] Եվրասիական տնտեսական միություն և անդամ պետություններ, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (2019 թ., հոկտեմբերի 25): Համաձայնագիր՝ Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին: Աղբյուրը՝ https://eec.eaeunion.org/upload/medialibrary/891/Tekst-armyanskiy-_EAEU-alternate-final.pdf

[4] Աթոյան, Վ. և ուրիշներ (2021): Հայաստան–Չինաստան տնտեսական համագործակցության հեռանկարները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի շրջանակներում: Երևան, «Տնտեսագետ» («Ամբերդ» մատենաշար, թիվ 49), https://doi.org/10.52174/978-9939-61-239-3

[5] Թավադյան, Ա. (2024 թ., ապրիլի 12): Ոսկու տենդ. Հայաստանի արտահանման կեսը վերաարտահանում է: Աղբյուրը՝ https://www.tvyal.com/newsletter/2024/2024_04_12

[6] Վերլուծությունը կատարվել է ITC Trade Map տվյալների հիման վրա (մուտք՝ 02.05.2024), https://www.trademap.org/Index.aspx



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Հայաստանի ապրանքային առևտուրը Չինաստանի հետ, 2014-2024 թթ.[7]

կազմելով 13.3%: Այնուամենայնիվ, դրանից հետո Չինաստանի հետ ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման ծավալները զգալիորեն աճել են: Տեսակարար կշռի նվազումը պայմանավորված է դեպի այլ, ոչ ավանդական շուկաներ արտահանման կտրուկ աճով, որը, ըստ վերլուծությունների, ոսկու վերաարտահանման արդյունքն է: Հետևաբար՝ այդ գործընթացներն իրենց բնույթով ժամանակավոր են և էական ազդեցություն չունեն երկարաժամկետ հեռանկարում:

Փոխադարձ առևտրի շարժընթացը ներկայացված է գծապատկեր 1-ում, որից պարզ է դառնում, որ 2021-2023 թթ. ընթացքում ներմուծման ծավալները դինամիկ կերպով աճ են արձանագրել, մինչդեռ արտահանման ցուցանիշներն էական փոփոխություն չեն կրել: Արդյունքում 2023 թ. առևտրային հաշվեկշռի պակասուրդը հասել է ռեկորդային մակարդակի՝ կազմելով շուրջ 1.2 մլրդ ԱՄՆ դոլար: Պատկերն էապես փոխվել է 2024 թվականին, երբ արտահանման ծավալներն աճել են շուրջ 2.5 անգամ՝ 2023 թ. 425.3 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 1.1 մլրդ ԱՄՆ դոլարի: Նույն տարում արձանագրվել են ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման ռեկորդային ցուցանիշներ: Առևտրի աճի շարժառիթները հասկանալու նպատակով անհրաժեշտ է վերլուծել դրա ապրանքային կառուցվածքը:

Երկկողմ առևտրի ապրանքային կառուցվածքը

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ վերջին տարիներին Հայաստանից Չինաստան արտահանման վրա ևս էական ազդեցություն ունեցել է վերաարտահանումը: Այսպես՝ 2024 թ.արտահանման կեսից ավելին կազմել է «Թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ» ապրանքախումբը՝ 588,2 մլն ԱՄՆ դոլար ծավալով: Վերաարտահանվել է ոսկի և արծաթ: Համեմատության համար նշենք, որ 2019 թ. այս ապրանքների արտահանումն աննշան է եղել՝ 0,1 մլն ԱՄՆ դոլար:

Հայաստանից Չինաստան արտահանման կարևորագույն ապրանքախումբը հանքաքարն է: 2024 թ. Չինաստան արտահանվել է 481.2 մլն ԱՄՆ դոլարի հանքաքար, ինչը գրեթե երեք անգամ գերազանցում է 2019 թ. ցուցանիշը: Չինաստանը ներկայումս հանքաքարի արտահանման հիմնական ուղղությունն է՝ ապահովելով 52.1% մասնաբաժին: Հատկանշական է, որ 2019 թ. Չինաստանի մասնաբաժինը զգալիորեն ավելի փոքր է եղել՝ կազմելով 26.6%, և այդ փուլում նա զիջել է Բուլղարիային (30.1%) և Շվեյցարիային (30.3%)[8]:

«Բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, ինչպես նաև դրանց

[7] Վերլուծությունը կատարվել է ITC Trade Map տվյալների հիման վրա, (մուտք՝ 02.05.2024), https://www.trademap.org/Index.aspx

[8] Վերլուծությունը կատարվել է ITC Trade Map տվյալների հիման վրա, https://www.trademap.org/Index.aspx

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ-ից Չինաստան արտահանման ապրանքային կառուցվածքը[9]

2024 թ.			2019 թ.		
ԱՏԳԱԱ	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	ԱՏԳԱԱ	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %
71 - Թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	588,2	53.6%	26 - Հանքաքար, խարամ և մոխիր	176.8	91.3%
26 - Հանքաքար, խարամ և մոխիր	481,2	43.8%	87 - Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, դրանց մասեր	12.0	6.2%
90 - Բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր	9,3	0.9%	90 - Բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր	2.9	1.5%
72 - Երկաթամիահալվածք	8,4	0.8%	22 - Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ	1.0	0.5%
24 - Ծխախոտ	6,3	0.6%	24 - Ծխախոտ	0.4	0.2%
22 - Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ	1,8	0.2%	18 - Կակաո	0.1	0.1%
74- Պղինձ	1,0	0.1%	71 - Թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	0,1	0.1%
Այլ	0,2	0.1%	Այլ	1,2	0.1%

մասեր» ապրանքախումբը Հայաստանից Չինաստան արտահանվող միակ բարձր տեխնոլոգիական արտադրանքն է: Թեև տվյալ ապրանքախմբի արտահանման ծավալները համեմատաբար փոքր են, սակայն արձանագրվում է կայուն աճի միտում. եթե 2019 թ. արտահանվել է 2.9 մլն ԱՄՆ դոլարի արտադրանք, ապա 2024 թ. այդ ցուցանիշը հասել է 9.3 մլն ԱՄՆ դոլարի: Հայաստանն ունի բժշկական սարքավորումների սահմանափակ արտադրություն, արտադրում է համեմատաբար պարզ սարքեր՝ ներարկիչ, պուլսօքսիմետր, ալկոթես տեր և այլն: Կարելի է ենթադրել, որ այս ապրանքախմբի արտահանումը ևս մեծ չափով հայաստանյան ծագման չէ:

Չինաստան արտահանվող մյուս ապրանքատեսակներից են ծխախոտը և ալկոհոլային խմիչքները, որոնց արտահանման ծավալները դիտարկվող ժամանակահատվածում նույնպես աճել են: Մասնավորապես՝ ծխախոտի արտահանումը 0.4 մլն ԱՄՆ դոլարից աճել է մինչև 6.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ խմիչքների արտահանումը՝ 1 մլն-ից հասել է 1.8 մլն ԱՄՆ դոլարի:

Չինական շուկայի հսկայական ծավալները լայն հնարավորություններ են ընձեռում այս երկրից տարաբնույթ ապրանքներ ներմուծելու համար (աղյուսակ 2): Գերակշռում է բարձր տեխնոլոգիական արտադրանքը՝ մեքենաներ և սարքավորումներ (440,4 մլն ԱՄՆ դոլար), էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ (356,3 մլն ԱՄՆ դոլար), վերգետնյա տրանսպորտային միջոցներ (204,6 մլն ԱՄՆ դոլար), բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ (45,1 մլն ԱՄՆ դոլար): Ներմուծման կառուցվածքը գրեթե չի փոխվել դիտարկվող ժամանակահատվածում: Ամենամեծ աճն այս ընթացքում գրանցել է տրանսպորտային միջոցների ներմուծումը՝ մոտ 8 անգամ: Նվազել են ցածր տեխնոլոգիական ապրանքների բաժինն ու ծավալները (տրիկոտաժ, հագուստի պարագաներ, կահույք և այլն):

Առևտրի փոխլրացման ինդեքսը

Փոխադարձ առևտրի գնահատման տեսանկյունից, կարևոր տեղեկատվություն է պարունակում առևտրի փոխլրացման ինդեքսը (ԱՓԻ), որը ցույց է տալիս, թե որքանով է մի երկրի արտահանման կառուցվածքը համընկնում կամ փոխլրացնում մյուս երկրի ներմուծման կառուցվածքին: Գծապատկեր 2-ից պարզ է դառնում,

[9] Հեղինակի հաշվարկները՝ ITC Trade Map տվյալների հիման վրա (մուտք՝ 02.05.2024), https://www.trademap.org/Index.aspx

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Չինաստանից ՀՀ ներմուծման ապրանքային կառուցվածքը[10]

2024 թ.			2019 թ.		
ԱՏԳԱԱ	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	ԱՏԳԱԱ	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %
84 - Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	440.4	26.4%	85 - Էլեկտրական մեքենասարքավորումներ, մասեր	181.3	24.3%
85 - Էլեկտրական մեքենա- և սարքավորումներ, մասեր	356.3	21.3%	84 - Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	153.3	20.5%
87 - Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, դրանց մասեր	204,6	12.3%	64 - Կոշիկ, զուգագուլպա և նմանատիպ իրեր	37.4	5.0%
64 - Կոշիկ, զուգագուլպա և նմանատիպ իրեր	55,9	3.4%	61 - Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ	33.8	4.5%
90 - Բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր	45,1	2.7%	87 - Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, դրանց մասեր	26.5	3.5%
40 - Կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր	44,5	2.7%	94 - Կահույք, անկողնային պարագաներ	26.4	3.5%
48 - Թուղթ և դրանից պատրաստված իրեր	42,5	2.5%	39 - Պլաստմասսա և դրանից իրեր	22.4	3.0%
Այլ	479,7	28,7%	Այլ	266.6	35.7%

որ Հայաստանը սահմանափակ հնարավորություններ ունի՝ Չինաստանի ներմուծման պահանջարկի բավարարման տեսանկյունից: Չնայած նրան, որ, 2022 թվականից սկսած, Հայաստանի արտահանման և Չինաստանի ներմուծման կառուցվածքների փոխլրացման ինդեքսը (ԱՓԻ$_{\text{Հայ.արտ.Չին.ներմ}}$) գերազանցել է ցածր համարվող շեմը (ԱՓԻ 21–40 միավորը համարվում է ցածր փոխլրացելիություն), այդ աճը տեղի է ունեցել թանկարժեք մետաղների վերաարտահանման հաշվին:

Չինաստանի՝ ՀՀ ներմուծման պահանջարկը բավարարելու հնարավորություններն անհամեմատ ավելի մեծ են: Այսպես՝ 2024 թ. ԱՓԻ$_{\text{Հայ.արտ.Չին.ներմ}}$ կազմել է 55,4 միավոր, ինչը համարվում է միջին փոխլրացելիություն: Ինդեքսի կայուն աճը պայմանավորված է եղել Չինաստանի տնտեսության անցումով դեպի բարձր տեխնոլոգիական արտադրություն և արտահանման բազմազանեցում:

Համեմատական առավելություններ

Արտահանման ներուժ ունեցող ճյուղերի բացահայտման համար անհրաժեշտ է ուսումնասիրել դրանց մրցակցային դիրքը նպատակային շուկայում: Չինական շուկայում հայաստանյան ապրանքների մրցունակության գնահատման համար ուսումնասիրվել է երկկողմ նորմալացված՝ բացահայտված համեմատական առավելությունների ինդեքսը : Վերջինս Բալասայի ինդեքսի կատարելագործված տեսակն է և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$NRCA_{ij} = (E_j^i/E) - (E_j E^i/EE)$$

$NRCA_{ij}$-ը նորմալացված համեմատական առավելությունների ինդեքսն է, E_j^i-ն՝ i երկրից j ապրանքի արտահանումը նպատակային շուկա, E-ն՝ բոլոր երկրներից բոլոր ապրանքների արտահանումը նպատակային շուկա, E_j-ն՝ j ապրանքի արտահանումը բոլոր երկրներից դեպի նպատակային շուկա, E_i-ն՝ i երկրից բոլոր ապրանքների արտահանումը դեպի նպատակային շուկա:

$NRCA_{ij}>0$, նշանակում է, որ երկիրը j ապրանքի գծով ունի համեմատական առավելություն, և որքան մեծ է $NRCA_{ij}$ ցուցանիշը, այնքան մեծ է համեմատական առավելությունը: Ինդեքսը կարող է ընդունել -1/4 մինչև +1/4 արժեքներ[11]:

[10] Հեղինակի հաշվարկները՝ ITC Trade Map տվյալների հիման վրա (մուտք՝ 02.05.2024), https://www.trademap.org/Index.aspx

[11] Yu, R., Cai, J. & Leung, P. The normalized revealed comparative advantage index. Ann Reg Sci 43, 267–282 (2009). https://doi.org/10.1007/s00168-008-0213-3



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Հայաստանի և Չինաստանի առևտրի փոխլրացման ինդեքսների շարժընթացը, 2014-2023 թթ.[12]

2019 թվականին Չինաստանի շուկայում արտահանման ներուժով առանձնացել են 6 ապրանքախմբեր, որոնք ունեցել են դրական նորմալացված՝ բացահայտված համեմատական առավելության ինդեքս (NRCA): Սակայն, 2024 թվականին այդպիսի ապրանքների թիվը կիսով չափ նվազել է, և դրական NRCA է գրանցվել ընդամենը 3 ապրանքախմբի դեպքում: Դրանք են՝ թանկարժեք կամ կիսաթանկարժեք մետաղներ, հանքաքար և ծխախոտ:

Ինչպես արդեն նշել ենք, թանկարժեք մետաղների արտահանումը մեծապես պայմանավորված է վերաարտահանմամբ և չի արտացոլում Հայաստանի արտադրական կարողությունները: Մյուս կողմից՝ թե՛ հանքաքարերի, թե՛ ծխախոտի ապրանքախմբերի դեպքում նկատվում է ոչ միայն արտահանման ծավալների, այլև մրցակցային դիրքի նկատելի բարելավում՝ 2019 թվականի համեմատությամբ: Ի տարբերություն այս դրական զարգացումների, մի շարք ապրանքախմբեր, որոնք 2019-ին ցուցաբերել էին արտահանման որոշակի ներուժ, 2024 թվականին դուրս են մնացել մրցունակ խմբից: Խոսքը վերաբերում է հետևյալ ապրանքախմբերին՝ վերգետնյա տրանսպորտային միջոցներ, ոգելից և ոչ

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Հայաստանի մրցակցային առավելությունները չինական շուկայում, 2024 և 2019 թթ.[10]

2024			2019		
Խումբ	*NRCA*	*Արտահանման ծավալները, մլն ԱՄՆ դոլար*	*Խումբ*	*NRCA*	*Արտահանման ծավալները, մլն ԱՄՆ դոլար*
71 - Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	2.0788	588.2	26 - Հանքաքար, խարամ և մոխիր	0.7809	176.8
26 - Հանքաքար, խարամ և մոխիր	1.4477	481,2	87 - Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, դրանց մասեր	0.0242	12.0
24 - Ծխախոտ	0.0205	6,3	22 - Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ	0.0025	1.0
			24 - Ծխախոտ	0.0012	0.4
			18 - Կակաո և դրանից պատրաստված մթերք	0.0003	0.1
			57 - Գորգեր և հատակի այլ տեքստիլ ծածկոցներ	0.0003	0.1

[12] Հեղինակի հաշվարկները՝ Համաշխարհային բանկի տվյալների հիման վրա (մուտք՝ 07,05.2024), https://datacatalog.worldbank.org/search/dataset/0064732/Trade-Complementarity-Index-Export

ոգելից ըմպելիքներ, կակաո և դրանից պատրաստված մթերք, գորգեր և հատակի տեքստիլ ծածկոցներ: Սա վկայում է, որ չինական շուկայում Հայաստանի արտահանման կառուցվածքը 2024 թ. դարձել է ավելի նեղ և մասնագիտացված, ինչն ունի որոշակի ռիսկեր՝ բազմազանեցման բացակայության պատճառով:

Որպես հնարավոր զարգացման ուղղություններ՝ կարելի է դիտարկել ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների մրցակցային դիրքերի վերականգնումը, ինչպես նաև շոկոլադի արտահանման ընդլայնումը: Չնայած վերջին տարիներին այս ըմպելիքների ապրանքախումբը կորցրել է մրցունակությունը, այդուհանդերձ, արտահանման ծավալն աճել է՝ 2019 թ. 1,0 մլն ԱՄՆ դոլարից 2024 թ. հասնելով 1,8 մլն ԱՄՆ դոլարի:

Շոկոլադի («Կակաո և դրանից պատրաստված մթերք») արտահանումը ևս կարևոր ուղղություն է, քանի որ 2019 թ., լինելով մրցունակ, դրա արտահանման ծավալները նվազագույն էին: Հաշվի առնելով Չինաստանի շուկայի անսահման մեծ հնարավորությունները՝ այս ուղղությունը կարող է զգալի առաջընթաց արձանագրել:

Լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն կա «Բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, ինչպես նաև դրանց մասեր» ապրանքախմբի արտահանման հետ կապված՝ հասկանալու համար, թե արտահանման որ մասն է տեղական արտադրանք, ինչ ապրանքատեսակներ են արտահանվում, և ինչպես կարելի է ընդլայնել արտադրությունն ու արտահանումը:

Ամփոփելով նշենք, որ ներկայումս Չինաստանը Հայաստանի համար առավելապես կարևորվում է որպես ներմուծման գործընկեր: Վերջին տարիներին գրանցվում է փոխադարձ առևտրի կայուն աճ: Թեև արտահանման ծավալները նույնպես կայուն աճ են գրանցում, այնուամենայնիվ, կենտրոնացումը հանքաքարի արտահանման և թանկարժեք մետաղների վերաարտահանման վրա է: ԱՓԻ ցածր արժեքները ցույց են տալիս, որ ՀՀ արտահանման կառուցվածքի հիման վրա արտահանման ընդլայնման հնարավորությունները սահմանափակ են: Արտահանման ընդլայնման տեսանկյունից, նպատակահարմար է դիտարկել «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ», «Ծխախոտ», «Կակաո և դրանից պատրաստված մթերք» ապրանքախմբերի արտահանման ընդլայնման հնարավորությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթոյան, Վ., և ուրիշներ (2021): Հայաստան–Չինաստան տնտեսական համագործակցության հեռանկարները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի շրջանակներում: Երևան՝ «Տնտեսագետ» («Ամբերդ» մատենաշար, թիվ 49), https://doi.org/10.52174/978-9939-61-239-3
2. Եվրասիական տնտեսական միություն և անդամ պետություններ, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (2019 թ., հոկտեմբերի 25): Համաձայնագիր՝ Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին: https://eec.eaeunion.org/upload/medialibrary/891/Tekst-armyanskiy-_EAEU-alternate-final.pdf
3. Թավադյան, Ա. (2024 թ., ապրիլի 12): Ոսկու տենդ. Հայաստանի արտահանման կեսը վերաարտահանում է: https://www.tvyal.com/newsletter/2024/2024_04_12
4. Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիր (1992 թ., հունվարի 9), http://www.parliament.am/library/erkoxm/1991-1995/4.pdf
5. Համաշխարհային բանկի տվյալների բազա, https://datacatalog.worldbank.org/search/dataset/0064732/Trade-Complementarity-Index-Export
6. Baena C., China as the World's Innovation Leader, https://www.ism.edu/ism-insights/how-ism-continues-to-make-an-impact-3.html
7. ITC Trade Map տվյալների բազա, https://www.trademap.org/Index.aspx
8. Yu, R., Cai, J. & Leung, P. The normalized revealed comparative advantage index. Ann Reg Sci 43, 267–282 (2009). https://doi.org/10.1007/s00168-008-0213-3

Шушан МОВСИСЯН
Эксперт-исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ЭКОНОМИЧЕСКОЕ СОТРУДНИЧЕСТВО АРМЕНИЯ–КИТАЙ: НОВЫЕ ВОЗМОЖНОСТИ

Китай является одной из крупнейших и наиболее быстроразвивающихся экономик мира. В последние годы торговые отношения между Арменией и Китаем значительно активизировались, достигнув беспрецедентных объемов. В данной работе проанализированы основные факторы этого роста, а также предпринята попытка оценить перспективы дальнейшего развития двусторонней торговли. Результаты анализа показывают, что структура армянского экспорта в Китай отличается высокой концентрацией в двух товарных группах: драгоценные металлы (реэкспорт) и руды. Именно резкий рост объемов экспорта этих групп стал основным фактором общего увеличения экспорта. В то же время особенно актуальной становится необходимость диверсификации экспорта. В этом контексте в исследовании выделены товарные группы, имеющие экспортный потенциал на китайском рынке, в частности: табачные изделия, напитки, продукция из какао, а также медицинские и хирургические инструменты и аппараты.

Ключевые слова: *Армения, Китай, торговля, реэкспорт, TCI*

Shushan MOVSISYAN
Expert-Researcher at "Amberd" Research Center, ASUE

ARMENIA AND WORLD

ARMENIA–CHINA ECONOMIC COOPERATION: NEW OPPORTUNITIES

China is one of the largest and fastest-growing economies in the world. In recent years, trade relations between Armenia and China have significantly intensified, reaching historically unprecedented levels. This paper analyzes the main drivers of this growth and explores the prospects for further development of bilateral trade. The findings show that Armenia's export structure to China is highly concentrated in two product groups—precious metals (re-exports) and ores. The sharp increase in the export volumes of these specific groups has been the main factor behind the overall export growth. At the same time, the need for export diversification becomes increasingly important. To that end, the study identifies several product groups with export potential in the Chinese market, particularly tobacco, beverages, cocoa and cocoa-based products, as well as medical and surgical instruments and appliances.

Keywords: *Armenia, China, trade, re-exports, TCI*